ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 46 - Ա
06 մարտի 2014 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ <<ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ>> ՄՐՑՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, <<Մանկապատանեկան սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 6- րդ մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ, 1.19-րդ կետերի և 2004թ. մայիսի 20-ի ՆԿ-113-Ն կարգադրության պահանջներով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 26.02.2014 թվականի <<Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի կանոնակարգը հաստատելու մասին>> N30-Ա/1 հրամանը

**կարգադրում եմ՝**

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2014 թվականին Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի տարածքային և մարզային փուլերը կազմակերպելու և անցկացնելու կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2014 թվականին Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի մարզային փուլի մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2014 թվականին Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի տարածքային և մարզային փուլերը կազմակերպելու և անցկացնելու ժամանակացույցը՝ համաձայն N3 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Վ. Ղուկասյանին՝ միջոցառումների անցկացման գործընթացն իրականացնելու համար ապահովել սույն կարգադրության և միջոցառման կանոնակարգի առաքումը մարզի համայնքներ:

3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ա. Մելքոնյանին՝ ապահովել մրցույթի տարածքային և մարզային փուլերի մրցումներին մասնակից ընտանիքների առաջին բժշկական օգնությունը:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝ ապահովել բնակչության ու կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթին և մրցույթի տարածքային փուլում հաղթած ընտանիքների մասնակցությունը մարզային փուլին:

5. Սույն կարգադրության հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:

6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի

2014 թվականի մարտի 6 - ի

N 46 - Ա կարգադրության

**ԿԱԶՄ**

**Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2014 թվականին Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի տարածքային և մարզային փուլերը կազմակերպելու և անցկացնելու կազմկոմիտեի**

Բադալյան Գ. – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/

Ասատրյան Ի. – մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Մելքոնյան Ա. – մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Զարվադարյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ

Սաֆարյան Հ. – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ

Շահբազյան Հ. – մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ

Քոլոզյան Մ. - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության ՏԻՄ բաժնի վարիչ

Հակոբյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության գլխավոր մասնագետ

Հարությունյան Ա. – մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության գլխավոր մասնագետ

Ղազարյան Ս. – մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության գլխավոր մասնագետ

Ջազյան Կ. – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

Շառոյան Վ. – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

Օհանյան Տ. – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

Թիզյան Հ. – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

Մալխասյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի կրտսեր մասնագետ

Մարտիրոսյան Գ. - Գավառի քաղաքապետ /համաձայնությամբ/

Հարությունյան Բ. - Մարտունու քաղաքապետ /համաձայնությամբ/

Խլոյան Վ. - Վարդենիսի քաղաքապետ /համաձայնությամբ/

Ղուկասյան Ռ. - Սևանի քաղաքապետ /համաձայնությամբ/

Ավալյան Յու. - Ճամբարակի քաղաքապետ /համաձայնությամբ/

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2014 թվականի մարտի 6 - ի
N 46 - Ա կարգադրության

**ԿԱԶՄ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ <<ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ>> ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

Զարվադարյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ /պատասխանատու/
Առաքելյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ /գլխավոր մրցավար/
Նիկողոսյան Տ. - Գեղարքունիքի մարզային մարզադպրոցի տնօրեն
Ներսիսյան Լ. - Գեղարքունիքի մարզային մարզադպրոցի փոխտնօրեն
Բազիկյան Տ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ
Զախարյան Ա. –Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիայի Գավառի մասնաճյուղի ներկայացուցիչ
Հարությունյան Հ. –Մարտունու քաղաքային մարզադպրոցի փոխտնօրեն
Սարգսյան Ս. - Գավառի N 2 միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ
Վարդանյան Յու. - Նորատուսի N 3 միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ
Մովսիսյան Հ. - Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ
Բադեյան Գ. – Գավառի N3 հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ
Հայրապետյան Գ . – Սևանի ավագ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ
Ղուրշուդյան Ե. - Գավառի N8 միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2014 թվականի մարտի 6 - ի
N 46 - Ա կարգադրության

# ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ <<ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ>> ՄՐՑՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

| Հ/Հ | Տարածքի անվանումը | 1-ին փուլի անցկացման | | 2-րդ փուլի անցկացման | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Վայրը | Ժամանակը | Վայրը | Ժամանակը | Մասնակից ընտանիքների երեխաների տարիքային խումբը |
| 1 | Գավառ | Գավառի N2 միջն.դպրոց | հունիսի 6-8-ը | Գավառի N2 միջնակարգ դպրոց | հունիսի 19-ին, ժ. 11:00-ին | 2006-2008 թ.թ.ծնված. |
| 2 | Սևան | Սևանի ավագ դպրոց | հունիսի 6-8-ը | | հունիսի 20-ին ժ. 11:00-ին | 2003-2005 թ.թ. ծնված. |
| 3 | Մարտունի | Մարտունու N1 հիմնական դպրոց | հունիսի 6-8-ը | | հունիսի 21-ին ժ. 11:00-ին | 2000- 2002 թ.թ. ծնված. |
| 4 | Վարդենիս | Վարդենիսի Քաղաքային մարզադաշտ | հունիսի 6-8-ը | | հունիսի 22-ին ժ. 11:00-ին | 1998-1999 թ.թ. ծնված. |
| 5 | Ճամբարակ | Ճամբարակի N1 հիմնական դպրոց | հունիսի 6-8-ը | | | |

Ծանոթություն – Տարածքային փուլի մրցումները կազմակերպում և անցկացնում են քաղաքապետարանների կողմից ստեղծված մրցավարական հանձնաժողովները:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ